1908

ՁԱՐԻ ՎԵՐՋԸ

Լինում է մի սար,
Էն սարում մի ծառ,
Էն ծառում փըչակ,
Փըչակում մի բուն,
Բընում երեք ձագ,
Ու վըրեն Կըկուն։
— Կո՛ւկու, կո՛ւկու, իմ կուկուներ,
Ճրբ պիտի դուք առնեք թևեր,
Թըռչե՛ք, գընաք,
Ուրախանաք...
Երգում էր մարիկ Կըկուն.
Մին էլ, ըհը՛, Աղվեսն եկավ.
— Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փըչակ կա,
Փըչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել
Տիրացել թաքուն։
Ախ դու Կըկու, հիմա՛ր Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Երեք հատ ձագ, աղա Աղվես։
— Երեք հատ ձագ ցույց կըտամ քեզ։

Ու չե՞ս ասել, դու, անամոթ,
Մինը ծառա ղըրկես ինձ մոտ։
Զըգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
— Վա՛յ, չըկտրես,
Աստված սիրես,
Էս մինն ահա
Տար քեզ ծառա,
Միայն թե էդպես
Մի ջընջիլ մեզ
Բընով-տեղով,
Ամբողջ ցեղով։
Խնդրեց մարիկ Կըկուն ու ձագերից
մինը ձգեց ներքև։
Աղվեսը՝ հա՛փ, առավ գնաց։
— Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ լավ կուկու.
Ո՞ր սև սարում,
Ո՞ր անտառում,
Ո՞ր թըփի տակ
Կորար մենակ...
Վայ-վա՛յ, դու-դո՛ւ,
Իմ խեղճ կուկու...
Լաց էր լինում մարիկ Կըկուն, մին էլ, ըհը՛,
Աղվեսը ետ եկավ։
— Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է,
Ծառում փըչակ կա,
Փըչակում՝ մի բուն,
Էս ո՞վ է եկել

Տիրացել թաքուն։
Ախ դու Կըկու, հիմար Կըկու,
Քանի՞ փոքրիկ ձագ ունես դու։
— Երկու հատ ձագ, աղա Աղվես։
— Երկու հատ ձագ ցույց կըտամ քեզ։
Ա՜խ, չարամիտ դու ավազակ,
Ի՜նչ խաբար է, երկո՜ւ հատ ձագ.
Ի՜նչ, ուզում ես էստեղ զոռով
Լըցնես ամբողջ կըկուներո՞վ...
Ձըգի շուտով մի հատը ցած,
Թե չէ՝ կացինս հըրեն սըրած,
Գընամ բերեմ,
Ծառը կըտրեմ...
— Վա՜յ, չըկտրես,
Աստված սիրես,
Էս էլ առ տար,
Ու թող դադար՝
Վերջինը գեթ
Մընա ինձ հետ...
Աղաչեց մարիկ Կըկուն ու երկրորդ ձագն էլ ձգեց ներքև։
Աղվեսը՝ հա՜փ, էս էլ առավ ու գնաց։
— Վայ-վա՜յ, վույ-վո՜ւյ,
Ընչի՞ համար
Եկա ես սար,
Բուն շինեցի,
Ձագ հանեցի...
Աղվեսն եկավ,
Տարավ, կերավ,
Երկու, երկու,
Կուկու... կուկու...
Լաց էր լինում մարիկ Կըկուն։

էս միջոցին — ղա՛, ղա՛, ղա՛, Ագռավն անց էր
կենում էն կողմերով։
85 Լսեց Կրկվի լացի ձայնը։
— Էդպես տխուր ու զարհուրիկ
Ինչ ես լալիս, Կրկու քուրիկ։
— Ինչպես չըլամ, ա՛ սանամեր.
Աղվեսն եկավ էն սըրտամեռ,
90 Գըլխիս էսպես փորձանք բերավ,
Ձագուկներըս տարավ, կերավ։
— Վո՛ւյ իմ աչքին, անխելք Կրկու,
Ինչպես իզուր խաբվել ես դու
Սուտ խոսքերից չար Աղվեսի։
95 Ո՞նց թե սարը իմն է՝ կասի։
Ո՞վ է տըվել էն լըրբին սար.
Սարն ամենքիս է հավասար...
Ո՞վ կըթողնի վեր կենա նա
Ամբողջ սարին գա տիրանա,
100 Անունը տա սըրած կացնի,
Սրան-նրան սուտ վախեցնի,
Ու մինն էսօր, մյուսը — երեկ,
Ձագեր տանի, ուտի մեկ-մեկ...
Սև գրողի էն տարածին
105 Ո՞վ է տըվել սըրած կացին։
Մին էլ որ գա ու սպառնա,
Մի՛ վախենա, քըշի գնա։
Էսպես ասավ Ագռավն ու թըռավ գընաց։ Ահա
կրկին Աղվեսն եկավ։
110 — Էս սարը իմն է,
Էս ծառը իմն է...
Հազիվ էր ասել, Կրկուն բնից գլուխը հանեց՝
— Սուտ ես ասում, դու խաբեբա,
Անխիղճ գազան, անկուշտ, ագահ։

115 Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է հավասար։
Ի՜նչ ես եկել սուտ տեր դարձել,
Ես էլ հիմար՝ ճիշտ եմ կարծել,
Ձագուկներըս տրվել եմ քեզ...
120 Կորի՛, գընա, դու չար Աղվես,
Հերիք ինչքան սուտ ես ասել.
Հիմի գիտեմ, չեմ վախում էլ.
Կացին չունես ծառը կըտրես։
— Ո՞վ ասավ քեզ։
125 — Ագռավն ասավ։
— Ագռա՞վը, լա՜վ։
Ու Ագռավի վրա բարկացած Աղվեսը պոչը
քաշեց, հեռացավ։ Գնաց մի դաշտում
սուտմեռուկի տվավ, վեր ընկավ, իբրև թե
130 սատկել է։ Ագռավն էլ կարծեց՝ իրավ սատկել
է, թռավ եկավ վրեն իջավ, որ աչքերը հանի։
Աղվեսը՝ հա՜փ, հանկարծ բռնեց։
— Ղա՜-ղա՜, ղա՜-ղա՜,
Աղվես աղա...
135 — Ա՛յ դու կռավան չարալեզու,
Ո՞նց թե Կըկվին ասել ես դու,
Թե ես կացին չունեմ սըրած...
Կացին չունե՜մ... դե՜ հիմի կա՜ց...
— Վա՜յ, քեզ մեղա,
140 Աղվես աղա,
Ես եմ ասել, չեմ ուրանամ,
Ինձ քըրքըրի, ինձ կեր հում-հում,
Տո՛ւր ինչ պատիժ սիրտըդ կուզի,
Բայց մի վերջին խոսքըս լըսի։
145 Ես էն սարում, հենց դեմ ու դեմ,
Էնպես մի թանկ պահուստ ունեմ,

Որ չես գըտնի դու քո օրում
Ոչ մի թառում կամ անտառում։
Ընչի՞ համար էն ահագին
Գանձը կորչի հողի տակին։
Արի գընանք, հանեմ տամ քեզ,
Էնքան ուտե՛ս, էնքան ուտե՛ս...
Թե չըլինի ու սուտ դուրս գամ,
Ես հո էստեղ միշտ կամ ու կամ...
— Գնա՛նք, ասավ Աղվեսը։ Թե կըլինի, շատ
լավ, թե չի լինի, էլի քեզ կուտեմ։ Գնացին։
Վերևից թռչելիս Ագռավը նկատել էր, որ մի
թփում պառկած էր գյուղացու շունը։ Աղվեսին
տարավ, տարավ, դուրս բերավ ուղիղ էն թփի
վրա։
— Ա՛յ, ասեց. էս թփումն է իմ պահուստը։
Աղվեսն ագահ վրա ընկավ թփին. շունը վեր
թռավ, կոկորդից բռնեց ու դրեց տակին։
Աղվեսը խեղդվելով սկսավ խռխռալ.
— Ա՛խ, ե՛ս... ա՛խ, ե՛ս...
Զգույշ Աղվես,
Փորձանքի մեջ
Ընկնեմ էսպե՛ս...
Ա՛խ, անիրա՛վ
Դու սև Ագռավ...
— Ինչքան էլ որ լինիս զգույշ,
Զարի համար թե վաղ, թե ուշ,
Էդ է պահված, Աղվես աղա,
Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛...
Պատասխանեց Ագռավն ու թռավ։